ՀՏԴ 82.09
Գրականագիտություն

Վալյա ԱՌԱՔԵԼՅԱՆ
բ.գ.թ. ավագ դասախոս, ԱրՊՀ

ՓԻՐՈՒՄՅԱՆՆԵՐԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՏՈՀՄԸ ԵՎ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Մեծ գեղագետ և պատմաբան Բ. Ուլուբաբյանի գրիչը անդադրում ծառայել է իր ժողովրդին:
Հիմք ընդունելով հարուստ սկզբնաղբյուրները՝ պատմական գիտական հետազոտություններն ու գիտական աշխատությունները իրենց ծանրակշիռ ներդրումն ունեցան դարավոր ազատագրական տարեգրության մեջ:
Բ. Ուլուբաբյանի գրական վաստակի մի զգալի մաս են կազմում նրա հրապարակախոսական կրքոտ հոդվածներն ու ակնարկները, գրականագիտականներն ու թարգմանությունները:
Մենք համոզված ենք, որ նրա գրական-գեղարվեստական ու պատմական գիտական ժառանգությունը դեռևս կգտնի իր նոր հետազոտողներին:
Բանալի բառեր՝ *Արցախյան պատերազմ, մարտ, Արցախյան ֆենոմեն, տարեգրություն, գաղափարախոս, տարեգիր, հիմն, պատմաբան:*

В.Аракелян

САРДАРАПАТСКОЕ СРАЖЕНИЕ И СЛАВНЫЙ РОД ПИРУМЯНОВ

Перо Б.Улубабяна- великого эстета и историка беспрестанно послужила своему народу.
Изданные на основе богатых первоисточников научно-исторические исследования и труды внесли весомый вклад в летописи вековой освободительной борбы.
Значительную часть литературной заслуги Б.Улубабяна составляют страстные бублицистические статьи и очерки, переводы и отклики.
Мы убеждены, что художественно-литературные и научно-исторические насле дия еще найдут новых исследователей.
Ключевые слова: *Арцахская война, бой, арцахский феномен, летопись, идеолог, летописец, гимн, историк.*

V. Araqelyan

THE SARDARAPAD BATTLE AND THE PIRUMANYAN`S GLORIOUS FAMILY

The contribution of B.Ulubabyan, the historian and art historian had served to his people impartaly. Each of the great historical works and researches of the historian is the steady contribution to the chronicals of the Armenian strugle of freedom.
The great part of B.Ulubabyan's literature services made up his urgent articles and reviews, the works of literary criticism translations from grabar (old Armenian language) and from Russian.
Keywords. *Artsakh war, heroic battle, Artsakhfenomen, annals, ideologist, chronicler, hymn, historian.*

Հայ ժողովրդի հազարամյա պատմության աստղային ժամը Սարդարապատի ճակատամարտն էր ՝ 1918 թ. մայիսյան այն օրհասական շաբաթը, որը կործանման եզրին հասած ազգի համար դարձավ գոյատևումի ու ազգապահպանության խարիսխ:

1918 թվականի մայիսին հայկական զորքի ձեռք բերած հաղթական իրադարձությունների վերապրումը ազգային գոյության ու ինքնաճանաչման կարևորագույն նախապայման է, բարոյական ու փիլիսոփայական հանգրվան ապագա սերունդների համար :

Սարդարապատի ճակատամարտով մարդկային և տարածքային մեծագույն կորուստներ կրած հայն ապրելու իրավունք ձեռք բերեց: Եվ այսօր մեզանից յուրաքանչյուրը, որ ապրում է Հայաստանում, Արցախում, թե օտար երկրում, հազարամյակների խորքից եկող ազգային ինքնագիտակցությունն ու գոյատևելու պատվախնդրությունը հանգուցալուծում է Սարդարապատով:

Բ.Ուլուբաբյանը «Սարդարապատ» վեպն էապես, պատմականորեն փաստարկված վավերագրական երկ է: Տաղանդավոր պատմաբանը և գրողն ստեղծել է ժողովրդական մեծ պայքարն արտացոլող մի վեպ, որն ունի անխարդախ ոգի, գրված է ներշնչանքով ու երևույթները գնահատող խորաթափանց մտքով: Վեպն ազնիվ մի պատում է հայ ժողովրդի պայքարի ու հպարտության մասին: Բ.Ուլուբաբյանի միտումը «պատմության հոգեբանական ճշմարտության» հայտնաբերումն է: Դրանով է պայմանավորված «Սարդարապատ» վեպի ամենակենսական լիցքը՝ ժողովրդական մաքառման արդիական իմաստավորումը, հարցադրումների այժմեականությունը:

Ուլուբաբյանը, պատմաշրջանի դրամատիզմն ու քաղաքական պայմանների սրությունը նկարագրելով, գեղարվեստորեն հավաստում է, որ պատմական շիկացած մթնոլորտը, քաղաքական հանգամանքները, իբրև առաջնորդ առաջ քաշեցին գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանին: Կախարդական մի հարվածով Դանիել Բեկ-Փիրումյանի ներքին ուժերը մի նոր լույս են ստանում. նա վճռում է լքել Երևանյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալի իր պաշտոնը և գնալ կռվի գիծ՝ տեղյակ դառնալով վերջին վճիռներին: Իսկ ինչպիսին էին վերջին վճիռները. դադարեցնել ռազմական գործողությունները հայ-թուրքական ճակատում և Երևանն առանց որևէ դիմադրության հանձնել թուրքերին:Նա ստիպված էր գործել ի հեճուկս հայկական զինվորական ու քաղաքացիական ամեն տեսակ ղեկավարության:

Իսկ Երևանի քաղաքային դումայում էլ մայիսի 18 – ին քննել են հարցը և որոշել, որ երկրի ղեկավարությունը պետք է քաշվի Սևանի բարձունքները՝ Երևանն ու Էջմիածինը հանձնելով թուրքերին: Երևան քաղաքի բնակչությունը, սակայն, ի զարմանս երկրի ղեկավարության,

ցույց կազմակերպեց: Քարկոծվեցին քաղաքային դումայի շենքը, համարձակ կանանցից մի քանիսը լաչակները վար առան գլխներից, շպրտեցին դեպի դումայի պատշգամբը՝ ասելով. «Առեք, այդ լաչակները կապեցեք ձեր դատարկ գլուխներին, դուք տղամարդու գլխարկ դնելու իրավունք չունեք» :

Այս ամենին իրազեկ և վկա գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը համարձակ վճիռ է կայացնում՝ դուրս գալ թշնամու ստեղծած ճակատի ամենասուր անկյան դեմ, որտեղ և գտնվում էր իր հորեղբորորդի գնդապետ Հովսեփ Բեկ-Փիրումյանի զորամասը և բեկում մտցնել ճակատում, որից կախված էր Հայաստան աշխարհի, նաև ազգի ճակատագիրը :

Դրության օրհասով պայմանավորված՝ խորհրդանշական էր Արարատյան երկրի բոլոր վանքերի ու եկեղեցիների զանգերից համազգային տագնապ ազդարարելը: Ոգեղեն էին Էջմիածնի ճեմարանի տեսուչ, մեր հայրենակից Գարեգին Հովսեփյանի՝ մեր ժամանակների Ոսկեբերանի /ծննդով Մաղավուզ գյուղից, հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, մշակութային գործիչ, հայագետ / ի զեն կոչերը :

Հիրավի, ազգը գտնվում էր ճակատագրական ճամփաբաժանումում և փրկչական աղոթք էր վանկարկում, որին ականջալուր եղան մեծերը՝ Վանի փրկիչ , Երևանի ազգային խորհրդի նախագահ, հմուտ քաղաքական գործիչ Արամ Մանուկյանը, զորավար Դրոն, Անդրանիկը, Դանիել Բեկ և Պողոս Բեկ-Փիրումյանները և ուրիշներ: Այդպիսի փայլուն համաստեղություն, թերևս, միատեղ չի տեսել մեր ազգը, որն անարգ թշնամուն պետք է ասի իր վերջին՝ հաղթական խոսքը :

Մարշալ Հովհ. Բաղրամյանը, «Սարդարապատի հերոսներ» աշխատության մեջ վերլուծելով հայկական զորքերի մարտական գործունեությունը /հատկապես Կյազիմ բեյի դիվիզիայի ջախջախումը/ ընդգծում է, որ այդ կարևոր հաղթանակում հսկայական դեր խաղաց 5-րդ հայկական հրաձգային գունդը. «Գունդը կազմավորված էր,- գրում է մարշալը,- հատկապես ղարաբաղցիներից և, գտնվելով գնդի հրամանատարական կետում՝ տոգորվեցի մեծ հարգանքով Ղարաբաղի ռազմիկների նկատմամբ՝ նրանց արիության, անձնուրացության և անվեհերության համար » :

Բեկ Փիրումյանները ազգականներ էին, ղարաբաղցիներ: … Հատկապես թուրքերի վրա ուժեղ ճնշում էր գործադրում և նրանց հսկայական կորուստներ պատճառում հայկական 5-րդ գունդը, որը տարիներ շարունակ կռվել է թուրքական ճակատում /Վասպուրականում և այլուր/ և փառքով պսակել իր անունը: Արիասիրտ ու անվեհեր էին նրա զինվորները՝ մեծ մասը ղարաբաղցիներ և Արարատյան դաշտի զավակներ: Նրա բոլոր վաշտերն էլ խիզախության համար « մահապարտներ» անունն էին ստացել :

Եվ անհնարինը դարձավ հնարավոր: Թուրքերի վերջին հաջողությունը եղավ մայիսի 21-ին Սարդարապատ գյուղի և համանուն կայարանի գրավումը: Սիլիկյանի հմուտ ղեկավարությամբ նույն օրն էլ կասեցվեց թշնամու առաջխաղացումը և լույս 22-ի գիշերը Դանիել Բեկ-Փիրումյանը նախապատրաստում էր այն հարվածը, որն իրագործելու էր իր հորեղբորորդի Պողոս Բեկ-Փիրումյանը: Մայիսի 22-ին ազատագրվեց Սարդարապատ գյուղն ու կայարանը: Այդ հաջողությունը մեծ խանդավառություն առաջացրեց ժողովրդի և զորքի մեջ: Թուրքերը դիմեցին անկանոն նահանջի: Մայիսի 24-26-ին Բաշ-Ապարանի ուղղությամբ հաղթանակ տարավ Դրոյի ջոկատը :

Այսպիսով՝ հայ զինվորների և աշխարհազորայինների մեկշաբաթյա մարտական գործողությունները, կազմալուծելով թուրքական բանակի գլխավոր ուժերը, փաստորեն արգելակեցին Արևելյան Հայաստանի նվաճումը: Թուրքական բանակի Կովկասյան ճակատի ընդհանուր հրամանատար Ֆերիկ վեհիբ փաշայի ծրագիրը, որ նա ձևակերպել էր ՝ « Այս օպերացիան ձեռնարկվում է սոսկ …հումանիզմի և քաղաքակրթության պարտքով » , տապալվեց :

Այսպես թե այնպես՝ արդյունքում մնում է մի պարզ ճշմարտություն . հայերի վճռականությունը հասկացնել տվեց թուրքերին, որ այս ժողովուրդն այլևս չի խոնարհվի վայրագ ու դաժան հակառակորդի առջև :

Հետաքրքիր է ինքնին այն փաստը, որ Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» գիրքը եզրափակվում է հետևյալ տողերով . «Սարդարապատի հաղթանակը դարբնել է հերոսացած ամբողջ ժողովուրդը-հայ զորքն ու աշխարհազորայինները-ռազմաճակատի հրամանատար գնդապետ Դանիելբեկ Աբիսողոմի Փիրումյանի ղեկվարությամբ» :

Ուլուբաբյանը, ժամանակաշրջանի դրամատիզմն ու քաղաքական պայմանների սրությունը ցույց տալով, գեղարվեստորեն հավաստում է, որ շիկացած մթնոլորտը, պատմական հանգամանքները առաջ քաշեցին գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանին: Հետաքրքիր մի զուգադիպությամբ զուգահեռվում են հայ ժողովրդի համար բախտորոշ երկու հերոսամարտերի կազմակերպիչների՝ Վարդան Մամիկոնյանի և Դանիել Բեկ-Փիրումյանի խոհերը և շատ դեպքերում նրանք շատ են նման իրար :

Պերճ Զայթունցյանը «Սրբազան խորհուրդ» հոդվածում, որը լույս է տեսել Սարդարապատի ճակատամարտի 70–ամյակի կապակցությամբ, նկարագրում է. «Գլխավոր հրամանատարի տեղակալ, ղարաբաղցի գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը ջրհան աշտարակի գագաթից տեսնում է, որ գրոհի նետված իր զինվորները շփոթվել ու տատանվում են մի պահ, և նա, հետևելով բնազդի թելադրանքին, այդ ակնթարթին հավատ չնծայելով խոսքի ուժին, հանում է զինվորական սև վերարկուն, շրջում վառ կարմիր աստառի կողմը, հագնում հակառակ երեսից և, Արարատյան դաշտի ղռերի խանձող արևի տակ, ոտքից գլուխ կաս–կարմիր, առաջնորդում է իր

զինվորներին: Այդպիսի լարված և օրհասական պահին ում լեզուն կպտտվի գնդապետի արածը գեղեցիկ էֆֆեկտ համարել: Դա սեփական հուսահատության և ուրիշներին հույս ու հավատ ներշնչելու գերմարդկային ճիչ էր, զինվորականի խիստ և հատու հրաման և միաժամանակ՝ զինակցի , ընկերոջ, ազգակցի խնդրանք, աղաչանք»:

Ուրեմն պետք է մեծարանքի հատուկ խոսք ուղղել գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի պայծառ հիշատակին: Այդ անունը ընդհանուր խմբանկարից առաջինը առանձնացրեց ու խոշոր պլանով ներկայացրեց Սարդարապատի ճակատամարտի մասնակիցներից մեկը ՝ կոռնետ Վանոն, հետագայում՝ Խորհրդային միության փառապանծ մարշալ Հովհ. Բաղրամյանը: Նա ջերմ գնահատական է տվել գեներալ Սիլիկյանին, ինչպես նաև Դանիել Բեկ-Փիրումյանին, որի գերդաստանի տասը անդամներ մասնակցում էին առաջին աշխարհամարտին, իսկ տասից վեցը՝ Սարդարապատի ճակատամարտին: Դ. Փիրումյանի երկու որդիները՝ Միքայելը և Հովսեփը, մասնակցեցին Սարդարապատի ճակատամարտին ցավոք, երկուսն էլ վիրավորվեցին, և նրանց գերի վերցրին թուրք ասկյարները. այդ ամենը հեռադիտակով տեսնում էր հայրը՝ Դ. Փիրումյանը :

Բացի հիշյալ Փիրումյաններից՝ Սարդարապատի ճակատամարտին իր ծառայությունն է մատուցել Քրիստափոր Փիրումյանը (Փիրումյանների տոհմից), որը Խնուսի գնդի ավագ բժիշկն էր և այսպես էր կատարում իր սրբազան պարտքը ՝ օրհասի առաջ կանգնած հայրենիքի հանդեպ:

Սարդարապատի ճակատամարտում առանձնապես քաջություն ցուցաբերեց Պողոս Բեկ /Պավել / Փիրումյանի 5-րդ գունդը, որին անվանում էին « Մահապարտների գունդ»:

Սերժ Աֆանասյանը այդ գնդի մասին գրում է. «Գնդապետ Պավել Բեկ-Փիրումյանի հետևակային 5-րդ գունդը մեծ մասամբ բաղկացած էր Ղարաբաղի քաջարի զինվորներից, որոնց Կիլիկիայի ապագա կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը մկրտել էր « անմահներ » անունով»:

Իսկ հիմա մեջբերենք Հ. Թուրշյանի գրքից. «Այդ օրհասական ժամին դրությունը նորից փրկում է «բոլշևիկյան» հորջորջված Մահապարտների 5-րդ գունդը: Նահանջն ու փլուզումը բացասաբար չէին ազդել միմիայն այդ գնդի հիմնական կորիզի վրա, որը կազմված էր նոր գաղթի հետ ընտանեկան առնչություն չունեցող ղարաբաղցիներից »:

Լեոն նույնպես հպարտության զգացումով է խոսել 5-րդ գնդի մասին:

Միանգամայն արդարացիորեն, հավատարիմ պատմությանը, Ուլուբաբյանը կենտրոնական տեղ է հատկացրել ղարաբաղյան գնդին, որը, իրոք, եղել է պաշտպանության առանցքը: Կարելի էր, իհարկե, ավելի տեղ հատկացնել վանեցիներին, իգդիրցիներին, մշեցիներին, որոնք նույնպես իսկական հերոսության օրինակներ են տվել ռազմի դաշտում և հետ մղելով թուրքական ուժերը Բաշ-Ապարանում՝ նպաստել Սարդարապատի զորքերի հաղթանակին:

Խորհրդային կարգերի առաջին իսկ օրերին Արտակարգ հանձնաժողովի նախագահ Գևորգ Աթարբեկովը (Ալ. Բեկզադյանը նրան կոչում էր Օտարբեկով) կալանքի տակ առավ Դանիել Բեկ Փիրումյանին և Սարդարապատի ու Բաշ-Ապարանի հարյուրավոր հերոսների , ավելի քան 1500 հայ մարդկանց ուղարկեց Ռուսաստան՝ իր նմաններին ի կեր:

Դանիել Բեկի ու նրա զինակիցների գնդակահարության լուրն առնելով ՝ կալանքից վրիպած Պողոս Բեկն ուզում էր բողոքել: «Այն ժամանակվա անգլիական (այժմ քսանվեցի) այգում մի մեծ բազմության առաջ բարձրացել էր ձյունոտ ու սառած նստարանը … Սակայն հերոսին լսող չկար : Գնդապետը ստիպված եղավ ատրճանակի փողն իր բերանը կոխել ու կրակել»: Հայրենական մեծ պատերազմում ավելի քան 20 արցախցի զինվորականներ արժանացել են Խորհրդային Միության հերոսի, իսկ Ն. Ստեփանյանը՝ կրկնակի հերոսի կոչման:

Վերը ներկայացված պատմական ուրվագիծը, որքան էլ թռուցիկ, ուստի և պակասավոր, այսուհանդերձ հաստատում է մի անառարկելի իրողություն. արցախահայությունն է Արցախ աշխարհի բնիկ տերը, այն պահողն ու ծաղկեցնողը :

Չափազանց կարևոր և հույժ այժմեական է այն, որ հեղինակը քննական վերլուծության եղանակով վեր է հանել ժամանակի հայ ղեկավար գործիչների թույլ տված քաղաքական ու դիվանագիտական սխալներն ու բացթողումները: Այս առումով «Սարդարապատ» վեպը ունի խորապես ժամանակակից հնչեղություն:

Սարդարապատի խորհուրդը մշտապես գործում է մեզ համար. այն բաց դաս է բոլոր ապրողներիս, որ ուսուցանում է հավաքականություն, հայրենասիրություն, անձնազոհություն և նորից ու հազար անգամ հավաքականություն:

Եվ որքան էլ տարօրինակ թվա, սակայն փաստ է, որ այդ հերոսամարտի մասին քիչ է գրվել, իսկ նրա շատ հերոսներ տակավին սպասում էին իրենց ճշմարտացի գնահատմանը: Հերոսները մեծարման կարիք չունեն բնավ, մենք ինքներս կարիք ունենք մեր հավաքական հիշողությունը հարգելու՝ ի սեր մեր այսօրվա և մանավանդ վաղվա բարոյականության:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը: